

ՀՐԱՀԱՆԳ

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ

98561

~~1430~~
m



Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Նիկիտաւարժ Տպարան Մայր Աթոռոյ

1918

12586

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈԳ

Հաստատեմք զայս հրահանգ
ի գործադրութիւն ընդ յօդուածով
1—51, յաւելմամբ ծանօթութեան
§ 45-րդի:


ԳԷՈՐԳ Ե.

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

1831 Հոկտեմբերի 1918 թ.

Ս. Էջմիածին.

թ. 534



Handwritten signature and initials in purple ink.

ՀՐԱՀԱՆԳ

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ

Ա.

ԱՏԵՆԱՊԵՏՈՒԹԻՒՆ

§ 1. Միաբանական ժողովն ունի իւր Ատենապետութիւնը:

§ 2. Ատենապետութիւնը բաղկացած է Ա. և Բ. Ատենապետներից և երկու Ատենադպրից:

§ 3. Ատենապետութիւնը վարում է ամբողջ գրադրութիւնը միաբանական ժողովի անունից, ժողովական —կօլեգիալ—կարգով, այսինքն ժողովի որոշումները արձանագրելուց և ստորագրելուց յետոյ՝ Ատենապետութիւնը նիստ է գումարում և համաձայն ժողովի որոշման՝ խմբագրում է ղեկուցումն կամ թուղթը և ուղարկում ըստ պատկանելոյն:

Ծանօթ. Արտակարգ դէպքերում ժողովը լիազօրում է Ատենապետութեանը արձանագրութիւնը հստորագրած իւր որոշումներն ի կատար ածել:

§ 4. Ատենապետութիւնն է ստանում ժողովի անունով եկած թղթերը. զիւանական որ և է տեղեկութիւն, լրացումն, ի կատար է ածում իւրովի, իսկ եթէ նախընթաց չունեցող թուղթ է, առաջարկում է ժողովին:

§ 5. Ատենապետութիւնն է կազմում իւրաքանչիւր նիստի օրակարգի հերթականութիւնը:

§ 6. Ատենապետութիւնն ունի իւր կնիքը վերառութեամբ «Ատենապետութիւն Մ. Աթոռի Միաբանական Ժողովի»: Կնիքի կեդրոնում փորուած է Ս. Էջմիածին:

§ 7. Ատենապետութիւնն ունի իւր զիւանդ—արխիւ:

Բ.

Ա Տ Ե Ն Ա Պ Ե Տ

§ 8. Միաբանական ժողովներում Ատենապետի պարտաւորութիւնն է.

Ա. ձիշտ որոշեալ ժամին դալ և եթէ ժողովականների մեծամասնութիւնը ներկայ է, բանալ ժողովը:

Ծանօթ. Որոշեալ ժամից երբ անցնում է 20 րոպէ, իսկ ժողովականների մեծամասնութիւնը չի լինում, կազմում է արձանագրութիւն, և ցրուում են:

Բ. նախորդ ժողովի արձանագրութիւնը կարդացնել և վաւերացնել տալ:

Գ. Յայտարարել օրակարգի խնդիրները:

Դ. Ստացած զրաւոր առաջարկները և այլ խնդիրները կարդալ տալ ի լուր ժողովի:

Ե. Ժողովի որոշումներն և վճիռները վաւերացնել իւր ստորագրութեամբ:

Զ. Օրինադններին կարգի հրաւիրել, հսկել ժողովի կանոնաւոր ընթացքի վերայ:

Է. Վիճաբանութիւնները կարգի աահմանում և նիւթի շուրջ պահել:

Ը. Երկայնամտութեամբ լսել բանախօսներին առանց ընդհատելու կամ բռնանալու արտայայտած կարծիքների վրայ. և

Թ. Ներկայացնել ժողովը, նրա պաշտպանը հանդիսանալ և հնազանդուել նրա կամքին:

§ 9. Ա. Ատենապետի բացակայութեան դէպքում նրան փոխարինում է երկրորդ Ատենապետը, որն ունի նրա բոլոր իրաւունքներն ու պարտաւորութիւնները:

§ 10. Առաջին Ատենապետը իւր աթոռը յանձնում է երկրորդ Ատենապետին՝

Ա. Երբ հարկից ստիպուած բացակայելու է.

Բ. երբ քննութեան դրուած հարցը իրեն է վերաբերում:

Գ. երբ ինքը կամենում է մասնակցել վիճաբանութիւններին:

Գ.

Ա Տ Ե Ն Ա Դ Պ Ի Ր Ն Ե Ր

§ 11. Ատենադպիրները վարում են Ատենապետութեան բոլոր զրազրութիւնները և կարգաւորում են զիւանդ:

§ 12. Ատենադպիրները հերթով վարում են իրանց պաշտօնը նիստերին:

§ 13. Հերթակալ Ատենադպրի պարտաւորութիւնն է՝
Ա. ներկաների և բացականների ցուցակը կազմել և յայտնել Ատենապետին ժողովականների լրիւ թուի մասին:

Բ. Ատենապետի յանձնարարութեամբ կարդալ նախորդ ժողովի արձանագրութիւնը և ստորագրել տալ:

Գ. Դրի անցկացնել նիստի ժամանակ տեղի ունեցած վիճաբանութիւնների ամփոփումներն ու որոշումները:

Դ. Կարգալ ժողովի անունով ստացուած գրութիւնները:

§ 14. Այդ նիստում պաշտօնավարող ատենադպիրը իրեն չվերաբերեալ խնդիրների մասին կարող է մասնակցել վիճաբանութիւններին:

Դ.

ՄԻԱՌԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

§ 15. Միաբանական ժողովը գումարուած և օրինական է համարուած, եթէ ժողովի հրաւիրուած անդամների կիսից աւելին ներկայ է:

Ծանօթ. Բացառութիւն կազմում է այն խնդիրների քննութիւնը, որոնք նախատեսուած են միաբանական կանոնադրութեամբ և աւելի թիւ են պահանջուած:

§ 16. Քուէարկութիւնը լինում է բաց կամ գաղտնի:

§ 17. Ժողովի իւրաքանչիւր անդամ իրաւունք ունի դիտողութիւն անել կանոնադրութիւնից շեղուելու դէպքում:

§ 18. Որոշուած օրակարգի խնդիրները կարող են քննութեան նիւթ լինել մի կամ մի քանի ժողովներում:

§ 19. Ժողովը որ և է գործ ուսումնասիրելու համար ընտրում է յատուկ Յանձնաժողովներ:

§ 20. Ընտրութիւնները կատարուում են այսպէս՝

Ա. Նախ որոշուում է, թէ քանի՞ հոգուց պիտի բաղկանայ:

Բ. Ապա կատարուում է ընտրութիւն բաց կամ գաղտնի քուէարկութեամբ, տալով հարկաւոր դէպքում հրահանգներ:

§ 21. Ատենապետութիւնը Յանձնաժողովի ընտրութեան մասին պաշտօնապէս տեղեկացնում է ընտրուածներից աւագագոյնին և տալիս է հրահանգը:

§ 22. Յանձնաժողովի աշխատանքը Ատենապետութիւնը ստանալով զեկուցանում է ժողովին և հերթական օրակարգի խնդիր դարձնում:

§ 23. Յանձնաժողովի ժողովին ներկայացրած տեղեկագիրը դառնում է վերջինիս սեպհականութիւն:

§ 24. Ժողովը կարող է այդ տեղեկագիրն ընդունել անփոփոխ, փոփոխութիւններ անել կամ մերժել:

§ 25. Եթէ նիստը երկար է տևում կամ քննուելիք խնդիրը կարօտ է մտքերի մասնակի փոխանակութեան, ժողովականների մեծամասնութեան ցանկութեամբ նիստը ընդհատուում է առ ժամանակ:

§ 26. Նիստը բացուած յայտարարելուց յետոյ, եթէ կան հարցապնդումներ անողներ, նախ լսում է հարցապնդումը, որին պատասխանում է Ատենապետը կամ նա, որին վերաբերում է հարցապնդումը, Ատենապետի թոյլտուութեամբ:

§ 27. Հարցապնդման ժամանակ վիճաբանութիւններ չեն թոյլատրուում, բայց հարցապնդումն ու պատասխանը արձանագրուում են:

§ 28. Եթէ ժողովը կարևոր է համարում հարցապնդումը քննութեան նիւթ դարձնել, ձայների առաւելութեամբ որոշում է օրակարգի խնդիր դարձնել:

§ 29. Ժողովը պարտաւոր է զբաղուել զրուած օրակարգի խնդրով առանց շեղուելու:

§ 30. Ժողովին իրաւատէր է օրակարգի խնդիրները դառաւորել ըստ մեծամասնութեան ցանկութեան:

Ե.

ԺՈՂՈՎԱԿԱՆԻ ՊԱՐՏՔՆ ՈՒ ԻՐԱԽՈՒՆՔԸ

§ 31. Ժողովի իւրաքանչիւր անգամ հաւասար իրաւունք ունի:

§ 32. Իւրաքանչիւր անգամ պարտաւոր է ուշադրութեամբ լսել բանախօսին և խօսել իր հերթին Ատենապետի թոյլտուութեամբ:

§ 33. Ժողովի կանոնաւոր ընթացքը խանգարող, կանոնադրութեան և սոյն հրահանգին հակառակ ընթացող անգամը Ատենապետի կողմից, երկրորդելու դէպքում, զրկում է ձայնի իրաւունքից, ժողովի որոշմամբ, իսկ երրորդելու դէպքում, զրկում է մի, կամ մի քանի նիստից՝ Ատենապետի առաջարկութեամբ՝ ժողովի որոշումով:

§ 34. Իւրաքանչիւր անգամ զրուած հարցի համար ըստ էութեան իրաւունք ունի մի անգամ խօսելու, երկրորդ և աւելի անգամ ձայն է տրուում նորան բացադրութիւն տալու և հակաճառելու ըստ էութեան, երբ խօսողների ցանկը սպառուած է:

§ 35. Ժողովի անգամը խօսք խնդրելու համար կամ մատն է բարձրացնում կամ բարձր ասում է՝ «խօսք եմ խնդրում»:

§ 36. Ատենապետը խօսք խնդրողներին հերթով իրաւունք է տալիս խօսելու:

§ 37. Իւրաքանչիւր անգամ իրաւունք ունի առաջարկ անելու, առաջարկը օրակարգի մէջ է մտնում, եթէ ձայնակցող ունի:

§ 38. Օրակարգի ցուցակի մէջ մտած խնդիրները ժողովի քննութեան նիւթ են դառնում:

§ 39. Ժողովին է որոշում թէ առաջարկներից որն է շտապողական, յետաձգելի, յատուկ Յանձնաժողովի յանձնելի:

§ 40. Մերժուած առաջարկը կարելի է երկրորդել:

§ 41. Ժողովականներից եօթն հոգի իրաւունք ունեն պահանջ դնել արտակարգ ժողով գումարելու:

Զ.

ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

§ 42. Միաբանական իւրաքանչիւր ժողով ունի իւր Օրակարգը, որ սպառում է մէկ կամ մէկ քանի նիստերում:

§ 43. Օրակարգի մէջ մտնում են այն բոլոր խնդիրները, որոնք առաջարկում են միաբանական ժողովի անդամները և ընդունւում են ժողովից. այն բոլոր առաջադրութիւնները, որոնք տրուում են Վեհափառ Հայրապետի կողմից. այն զրութիւնները, որոնք ստացւում են դրսից, և վանական հաստատութիւնների ու յանձնաժողովների զեկուցումները:

§ 44. Ժողովների օրակարգը որոշում է ինքը ժողովը:

§ 45. Ժողովին իրաւատէր է օրակարգի հարցերը դառաւորել իւր կամեցածին պէս կամ իսպառ վերցնել անհրաժեշտ դէպքում:

Ծանօթ. Այս յօդուածին չեն ենթարկւում Վեհափառ Հայրապետի կողմից յղուած իւրաքանչիւր առաջադրութիւն:

Է.

ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

§ 46. Ընտրուած Յանձնաժողովը պաշտօնապէս ստանալով իւր ընտրութեան մասին գրութիւնը, նիստ է գումարում և ընտրում իւր նախագահն ու քարտուղարը:


§ 47. Յանձնաժողովը պարտաւոր է նշանակուած ժամանակամիջոցում իրան յանձնուած գործը աւարտել. յապաղման դէպքում բացագրութիւն է տալիս ժողովին:

§ 48. Յանձնաժողովի նիստերը կանոնաւոր են, եթէ մեծամասնութիւնը ներկայ է:

§ 49. Գործն աւարտելուց յետոյ յանձնաժողովի նախագահը ներկայացնում է Ատենապետութեան:

§ 50. Եթէ յանձնաժողովի մի անգամ կամ փոքրամասնութիւնը ընդունուած որոշման համաձայն չէ, կարող է գրաւոր կցել իւր կարծիքը:

§ 51. Յանձնաժողովը իրեն յանձնուած աշխատանքները աւարտելուց և միաբանական ժողովին յանձնելուց յետոյ՝ լուծուած է համարուում:



THE HISTORY OF THE

... of the ...

... of the ...

... of the ...

... of the ...

... of the ...

... of the ...

... of the ...

... of the ...

... of the ...

... of the ...

... of the ...

... of the ...

... of the ...